ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Էկոլոգիական դաստիարակության դերն արժեքային համակարգի ձևավորման մեջ

Մասնակից՝ Լուսինե Գալստյան
(անուն, ազգանուն)

Սյունիքի մարզ, գ. Ալվանք
դպրոց, (աշխատանքի վայր)

Ղեկավար՝ Ն. Ջավադյան

Վերապատրաստում իրականացնող կազմակերպություն՝ Կապանի թիվ 2 ավագ դպրոց

2022թ

Բովանդակություն

Ներածություն	3
Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը	5
Գրականության ակնարկ	7
Գործնական համատեքստ	9
Հետազոտության ընթացք	10
Եզրակացություն	17
Օգտագործված գրականություն	18

Ներածություն

Մարդկության գլխավոր հիմնախնդիրներից մեկը հանդիսանում է բնական միջավայրի պահպանությունը: Բնությունը մեզ շրջապատող աշխարհն է՝ իր դրսևորումների ողջ բազմազանությամբ: Մարդը բնության արգասիքն է և բնության զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում մարդկային զարգացումը և բնության հետ նպատակաուղղված փոխազդեցությամբ դառնում այդ հարստության սպառողը:

Էկոլոգիական դաստիարակություն՝ էկոլոգիայի մշակույթի հիմքը և անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:

Արդիականությունը

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը որպես մանկավարժական գործընթաց և հասարակության կայուն զարգացման անհրաժեշտություն՝ հիմնահարցերը քննարկել դասավանդվող բոլոր առարկաների դասաժամերին՝ ապահովելով սովորողների գիտակցված մասնակցություն բնապահպանությանը:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են.

1. Էկոլոգիական գիտելիքների հաղորդման իրավունքի ապահովումը և պաշտպանումը:

2. Ազգաբնակչության էկոլոգիական ուսուցման ,դաստիարակման և էկոլոգիական կուլտուրայի ձևավորման ու զարգացման իրավական ,սոցիալ տնտեսական , կազմակերպական , հոգեբանական և այլ երաշխիքների ապահովումը:

3. Գոյություն ունեցող տեղեկատվական ու կրթական կառույցների համակարգում առաջացած խնդիրների կենսագործման մեխանիզմների ապահովումը:

Նպատակը

1. Ապահովել մարդու և հասարակության անընդմեջ համալիր, միասնական էկոլոգիական գիտելիքների մատուցումը:

2. Նպաստել էկոլոգիական դաստիարակության և կուլտուրայի ձևավորմանը: Մարդու հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակմանը, համակողմանիորեն զարգացած անձի ձևավորմանը:

3 Սովորողներին զինել բնական միջավայրի և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտ գիտելիքներով, ինչպես նաև բնապահպանությանն առնչվող տարբեր գերտեսությունների հետ համատեղ ու համադրված գործունեությամբ:

Մարդկության առաջացման պահից բնության ճանաչումը եղել է գոյատևման ամենաանհրաժեշտ և կարևորագույն պայմաններից մեկը: Դարերի ընթացքում մարդկությունը քայլ առ քայլ կուտակել է էկոլոգիական գիտելիքներ: Իսկ էկոլոգիան գիտություն է կենդանի օրգանիզմների և միջավայրի փոխհարաբերությունների մասին: Այդ հարաբերությունները կազմում են ամբողջական և բարդ համակարգ, որը կոչվում է ԿՅԱՆՔ Երկրի վրա:

<Էկոլոգիա> տերմինը (հուն.՝ οἶκος, «տուն» կամ «միջավայր», -λογία «գիտություն» կամ «հետազոտություն») առաջին անգամ օգտագործել է գերմանացի կենսաբան Է. Գեկկելը /1886 թ./: Ըստ նախաբաղադրիչների Է. Գակկը այսպես է բնութագրել այն. << Էկոլոգիան դա բնության տնտեսության ճանաչումն է, ինչպես նաև կենդանի օրգանիզմների և մարդկային ոչ օչգանական բաղադրիչների փոխհարաբերությունների ուսումնասիրությունը>>: Այդ ժամանակներից էկոլոգիան զարգացել է որպես կենդանի օրգանիզմների բնակության վայրի մասին գիտություն:

Մարդը բնության զավակն է, բնության ամենասիրուն, ամենահետաքրքիր ու ամենաբարդ ստեղծագործությունը: Առօրյա կյանքում չպետք է մոռանանք, որ բնությունը ոչ միայն ռեսուրս է, որը գործածվում է

տնտեսության մեջ , այլ նաև ապրելու միջավայր է: Այդ իսկ պատճառով ամբողջ աշխարհում ստեղծվում են արգելոցներ ու ազգային այգիներ, անցկացվում են ամենամյա էկոլոգիական տոներ և միջոցառումներ:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը

Էկոլոգիական գիտելիքների և գիտակցության ձևավորման գործընթացի հիմքը էկոլոգիական հասկացություններն են: Հատկապես միջին դպրոցում էկոլոգիական հասկացությունների համակարգը, միջավայրի, նրա գործոնների օրգանիզմների, էկոհամակարգերի, կենսաերկրացենոզի, պոպուլյացիաների, տեսակների, սնման շղթաների, դրանց փոխադարձ կապերի և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ, ձևավորվում և զարգանում են սովորողների էկոլոգիական մտածողությունը, բնապահպանական պահանջմունքները, բնաճանաչողական ընդունակությունները, վարքագծի բարոյահրավական նորմերը, հուզա-կամային որակները: Սրանց թվին են պատկանում պարտքի, պատասխանատվության նորմերը, որոնք արտահայտում են անձի սոցիալական բարոյախրատական վերաբերմունքը, պատասխանատվությունն ու պարտականությունները հասարակության և շրջակա միջավայրի նկատմամբ:

Սովորողների կողմից էկոլոգիական իրավունքի գիտակցումն իր մեջ ներառում է շրջակա միջավայրի մեջ իր վարքագծի ճիշտ դրսևորման, բնության, սոցիալտնտեսական, գեղագիտական և հոգևոր արժեքների գիտակցման, բնությունը որպես ազգային հպարտություն ընկալելու ու նրա օգտագործման ուղղությամբ իր իրավունքների իմացության հարցերը: Իրավական գիտակցություն կարող է ձևավորվել միայն այն դեպքում, եթե դպրոցականը քաջատեղյակ լինի պետության կողմից սահմանված իրավական նորմերին, վարքագծի այն համապարտադիր կանոններին և իր իրավունքներին, որոնք առնչվում են պետական շահերին: Տվյալ դեպքում էկոլոգիական իրավունքը դպրոցականի այն վարքագիծն է, որն ընձեռված է

նրան բնության հետ հարաբերությունը կարգավորող իրավական նորմով և որ բաղկացած է բնական միջավայրում իր վարքագծի իրականացման հնարավորությունից ու պահանջի իրավունքից: Էկոլոգիական իրավունքները մտնում են դպրոցականի սոցիալ-տնտեսական իրավունքների խմբի մեջ, որը պարունակում է բնության, շրջակա միջավայրի, բնական հարաբերությունների շրջանում օգտագործման իրավունքները և պարտականությունները: Պետք է նշել, որ դպրոցականների էկոլոգիական գիտակցության ձևավորումն անմիջականորեն առնչվում է իրավական գիտակցության ձևավորման հետ և աճող սերնդի դաստիարակության ընդհանուր նպատակներից մեկն է, որը պետք է դրվի բոլոր ուսումնական առարկաների հիմքում: Էկոլոգիայի մասին այսօր խոսում են շատերը՝ այդ հասկացության տակ հասկանալով մարդու և բնության յուրաքանչյուր փոխազդեցությունը: Էկոլոգիայի տարրերը հայտնաբերվել են դեռևս նախնադարյան մարդու քարանձավային նկարներում, որից դժվար չէ կռահել, որ էկոլոգիան ամենահին գիտություններից է:

Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունը բազմակողմանի մի գործընթաց է, որն իր մեջ ընդգրկում է ոչ միայն բնապահպանական, այլ նաև աշխարհաճանաչողական, բարոյահոգեբանական, քաղաքական և շատ այլ նկատառումներ, որի հիմնական նպատակը սովորողների մեջ բնության նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտության գիտակցումն է: Հասարակության վերակառուցումը, նոր տնտեսական հարաբերություններն այսօր իրենց պահանջներն են առաջադրում ժամանակակից դպրոցին, և արդի մանկավարժական նոր խնդիրների թվին ավելանում է դպրոցականների՝ բնության նկատմամբ պարտքի ու պատասխանատվության զգացման, իրավունքի և վերաբերմունքի ձևավորման ու զարգացման խնդիրը, որոնց լուծումը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Բնության, նրա օրենքների ճանաչողությունը, նրա դաստիարակչական դերի բարձրացումը հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափություններից մեկն է: Այդ օրինաչափությունները պայմանավորված են հասարակական նշանակության պատճառներով: Պատմական զարգացման այս փուլում կարևորվում է նաև սոցիալական խնդիրների՝ որպես սուբյեկտիվ գործոնի

դերը: : Բնության պահպանումը դարձել է հասարակական արտադրության նպատակ և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկը, սակայն կա այդ գործընթացը կանխող մի հանգամանք, որ երկար ժամանակ անտեսվել է՝ բնաճանաչողությունն է, շրջապատող կենսոլորտի օրինաչափությունների և օրենքների իմացություն: : Անշուշտ, կենդանի բնության կորուստներն ավելի քիչ կլինեին, եթե մարդը լավ ճանաչեր բնությունը և այդ գիտելիքների հիման վրա կազմակերպեր իր գործունեությունը: Էկոլոգիական խորը գիտելիքները կօգնեն հասարակությանը խուսափելու էկոլոգիական ճգնաժամերից ու աղետներից, որոնց առկայությունը մարդկությունն արդեն գիտակցում է: Միայն էկոլոգիական գիտելիքների հիմքի վրա հնարավոր կլինի խելամտորեն օգտագործել բնական պաշարները, որոնել և գտնել գյուղատնտեսության ու արդյունաբերության կազմակերպման նոր սկզբունքներ:

Այսօր մեզ խիստ անհրաժեշտ է վերադառնալ հայ դպրոցի բնապահպանական, բնադաստիարակչական ակունքներին և լրջորեն զբաղվել դպրոցականների էկոլոգիական դաստիարակությամբ, որովհետև մեզ մոտ ավելի, քան մեկ ուրիշ երկրում, զգացվում է դրա կարիքը: Այն պետք է սկսել նախադպրոցական տարիքից, դաստիարակել էկոլոգիապես գրագետ և կրթված քաղաքացիներ: Էկոլոգիական կրթությունը տարրական կրթության համակարգում կրում է ուսուցողական, հիմնական դպրոցում՝ վերլուծական, իսկ ավագ դպրոցում՝ պրոբլեմային մակարդակ:

Գրականության ակնարկ

Հետազոտության իրականացման նպատակով ուսումնասիրել եմ շատ աշխատություններ:

Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է .

1.Բնության ,նրա հարստության,շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:

2.Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ, որպես ամենօրյա վարքի կանոն

Մեր օրերում հաճախ է շեշտվում այն ընդհանուր մոտեցումը, որ կրթության նպատակը միայն գիտելիքի տրամադրումը չէ: Այսօր կրթական համակարգն ունի առավել բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն, մտածելու, վերլուծելու, եզրահանգումներ կատարելու ունակություն:

Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: Շատ փիլիսոփաներ,գիտնականներ, քաղաքագետներ, իրենց աշխատությունն երում վերլուծում են պատճառները և ելք են որոնում էկոլոգիական ճկնաժամից դուրս գալու համար (Վ. Հեսլի ‹‹Փիլիսոփայությունը և էկոլոգիան››, Ն.Ֆ. Ռեյմերս, ‹‹Մարդկության կենդանի մնալու հույսերը›› և այլն):

Կենսաբանության բովանդակությունը, ինչպես ցանկացած այլ առարկայի, պետք է հիմնված լինի հատուկ ընտրված և զարգացած հմտությունների վրա, որոնք առաջնահերթ են յուրաքանչյուր դասընթացի,

բաժնի, թեմայի համար : Դրանցից, օրինակ, փաստեր գտնելու, հարցեր տալու, երևույթի ամբողջականությունը տեսնելու, խնդիրների լուծման ճիշտ ուղիներ գիտակցելու և ընտրելու, բոլոր տեսակի ուսումնական միջոցներով, լաբորատոր սարքավորումներով աշխատելու կարողություն և այլն: Ուստի խոսքն ուսումնական ծրագրերում կրթության գործունեության բովանդակությունը որպես կրթության ընդհանուր և առարկայական բովանդակության պարտադիր բաղադրիչ ներառելու անհրաժեշտության մասին է:

20-21-րդ դարերում բարձր տեխնոլոգիաների ու մարդկային մտքի աննախադեպ զարգացումը ցույց տվեց, որ ամեն օր փոխվում են մարդկային համակեցության նորմերն ու սահմանները, յուրաքանչյուր օրն իր հետ բերում է նոր մարտահրավերներ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, ու այդ մարտահրավերները կրկնապատկվում ու եռապատկվում են համաշխարհային դեմոգրաֆիական աճի աննախադեպ տեմպերով, երբ մարդկությունն արդեն պատրաստվում է հատել տասը միլիարդի սահմանը: Փոփոխություններն իրենց հետ բերում են բազմաթիվ ճգնաժամեր՝ էկոլոգիայի, պատերազմների, գաղափարական պայքարի ու այլ ձևերի մեջ, որոնց դիմագրավելու ու հաղթահարելու համար անհրաժեշտ են նոր մեխանիզմներ ու համակեցության էլ ավելի բարդ նորմեր ու կանոններ:

Կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և մատուցված նյութը սովորողի սեփականությունը դարձնելու նպատակով կիրառվում են բազմաթիվ լաբորատոր-գործնական աշխատանքներ՝ շրջապատող միջավայրում գտնվող կենդանի օրգանիզմների զննում, դիտարկում, մանրադիտակային հետազոտում, ուսումնական ճամփորդությունների կազմակերպում:

Ժամանակակից աշխարհում, երբ կյանքն ընթանում է աննկարագրելի արագությամբ, ամեն օր զարգանում է տեխնիկան և ներդրվում կյանքի բոլոր բնագավառներում, անկասկած, պետք է փոխվեն նաև դասավանդման մեթոդիկայի հետ կապված մոտեցումները, որպեսզի ուսուցիչը կարողանա ապահովել ուսուցման գերակա նպատակի իրականացումը :

Դասավանդման մեթոդիկայի ճիշտ ընտրությունից է կախված դասի անցկացման արդյունավետությունը և նպատակային լինելը:

Գործնական համատեքստ

Հանրակրթական դպրոցում <կենսաբանություն> առարկայի ուսուցումը, որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումը:

Հետազոտության արդյունքում կպարզեմ որքանով է կենսաբանության դասընթացը ազդել աշակերտների էկոլոգիական գրագիտության վրա: Որքանով են յուրաքանչյուրը պատասխանատու շրջակա միջավայրի մաքրության համար:

Էկոլոգիական հավասարակշռության համար անհրաժեշտ է, որ մարդն ապրի բնության հետ ներդաշնակ: Անհրաժեշտ է, որ մարդը խելամիտ օգտագործի և պաշտպանի բնության հարստությունները, իմանա բնության օրինաչափությունների շարք, դրա իրական արժեքն ու գիտակցի մարդու և բնության փոխազդեցության առանձնահատկուությունները: Մարդը չի կարող ապրել բնությունից մեկուսացված:

Դպրոց ավարտողը պետք է

- Ունենա դրական վերաբերմունք կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ:
- Գիտակցի առողջ ապրելակերպի նորմերի պահպանման անհրաժեշտությունը:

- Կարողանա բնության մեջ և շրջակա միջավայրում պահպանել վարքի կանոնները:
- Ցուցաբերի հոգատար վերաբերմունք կենսաբանական օբյեկտների, բնության հուշարձանների նկատմանբ, մասնակցի դրանց պահպանման միջոցառումներին:

Հետազոտութունս անց եմ կացրել Սյունիքի մարզի Ալվանք գյուղի դպրոցի 9-րդ դասարանում: Հետազոտությանը մասնակցել են բոլոր 5 աշակերտները: Հարցումով փորձել եմ պարզել աշակերտների մոտ Էկոլոգիական գիտելիքների մակարդակը և աշխարհայացքը: Թե արդյոք կենսաբանության դասընթացը նպաստել է բնության հանդեպ դրական վերաբերմունքի բարելավմանը:

Հետազոտության ընթացք

Հետազոտության մեջ ներառել եմ հետևյալ հարցերը

Հարցաշար

1 . Ի՞նչ է բնությունը:

2 .Մարդը կարո՞ղ է վնասել բնությանը:

3. Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամ:

4. Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:

5 . Ո՞րն եք առաջնահերթ համարում՝ բնապահպանությու՞նը, թե՞ գիտության զարգացումը: 6.Աղբ նետե՞լ եք ոռոգման ջրի առվի մեջ:

7. Ինչպե՞ս եք գնահատում այդ քայլը հիմա:

8. Ինչպե՞ս կվարվեք Դուք, եթե տեսնեք, որ ձեր հարևանը աղբ է նետում ոռոգման ջրի մեջ:

9.Մեր շրջապատի բույսերն ու կենդանիներն ունե՞ն արդյոք պաշտպանության կարիք:

10.Կմաքրե՞ք ուրիշի թափած աղբը:

11.Կարևո՞ր է անտառների պահպանությունը բնության համար:

12.Համարում ե՞ք ձեզ բավականին տեղեկացված էկոլոգիական խնդիրներին:

13. Փողոցով անցնելիս կամ այգում խաղալիս երբևէ պոկե՞լ եք ծառի ճյուղեր:

14. Ի՞նչ զգացողություն եք ունեցել այդ պահին: Հիմա ինչպե՞ս կգնահատեք այդ քայլը:

15.Անտառային հրդեհները և մասսայական անտառահատումները կարո՞ղ են վնաս հասցնել անտառներին:

16.Ի՞նչ կառաջարկեք անտառների կենսաբազմազանությունը պահպանելու համար:

Հարցաշարը կազմելիս այնպիսի հարցեր եմ ներառել, որոնց միջոցով կարողանամ պարզել աշակերտի մոտ էկոլոգիական գիտելիքների մակարդակը և աշխարհայացքը:

Կան նաև այնպիսի հարցեր, որոնք տեսանելի են դարձնում աշակերտների վարքը դասընթացից առաջ և հետո: Օրինակ՝

6.Աղբ նետե՞լ ենք ոռոգման ջրի առվի մեջ:

7.Եթե այո, ապա ինչպե՞ս եք գնահատում այդ քայլը հիմա:

12. Փողոցով անցնելիս կամ այգում խաղալիս երբևէ պոկե՞լ եք ծառի ճյուղեր: 13. Եթե այո ի՞նչ զգացողություն եք ունեցել այդ պահին:

14. Հիմա ինչպե՞ս կգնահատեք այդ քայլը:

Կան նաև այնպիսի հարցեր, որոնցով կպարզեմ աշակերտների պատասխանատվության աստիճանը բնության հանդեպ: Օրինակ

8. Ինչպե՞ս կվարվեք Դուք, եթե տեսնեք, որ ձեր հարևանը աղբ է նետում ոռոգման ջրի մեջ: 10.Կմաքրե՞ք ուրիշի թափած աղբը: Հարցման ադյունքները կներկայացնեմ գծապատկերների ձևով որպեսզի ավելի տեսանելի լինի

Հարցման արդյունքները

Աղբը նետել եք ոռոգման ջրի առվի մեջ

5 պատասխան



Գծապատկեր 1

Եթե այո ինչպես եք գնահատում այդ քայլը հիմա

5 պատասխան



Գծապատկեր2

Ինչպես երևում է 1-ին և2-րդ գծապատկերներում երեխաների վարքը բավականին լավացել է: Եթե առաջ երեխաների 75 %-ը աղբը լցնում էին ոռոգման ջրի մեծ առուն, հիմա հասկանալով իրենց քայլի վնասակար լինելը, այդպես չեն վարվում: Նույնիսկ բացասական վերաբերմունք են ցուցաբերում իրենց կատարածի հանդեպ:

Փողոցով անցնելիս կամ այգում խաղալիս երբևէ պոկել եք ծառի ճյուղեր

5 պատասխան



Գծապատկեր 3

Եթե այո ինչ զգացողություն եք ունեցել այդ պահին

5 պատասխան



Գծապատկեր 4

Հիմա ինչպես կգնահատեք այդ քայլն

5 պատասխան



Գծապատկեր 5

3-րդ, 4-րդ և 5-րդ գծապատերներից պարզ է դառնում երեխաների անպատասխանատու վարքը մեզ շրջապատող կանաչ զանգվածի հանդեպ: Երեխաների 62,2%ը մեծ հաճույքով փչացնում և պոկում են մեզ շրջապատող բույսերը և ծաղիկները: Բավականին ուրախացնող է տեսնել , որ հիմա հետազոտվող երեխաների 87,5 %-ը հասկացել են և բացասական են գնահատում այդ քայլը:

Ինչպես կվարվեք Դուք եթե տեսնեք, որ ձեր հարևանը աղբ է նետում ոռոգման ջրի մեջ:

5 պատասխան



Գծապատկեր 6

Կմաքրեք ուրիշի թափած աղբը:

5 պատասխան



Գծապատկեր7

Երեխաների վարքը բարելավվել է և նրանք հասկանում են որ պետք չէ փչացնել և աղտոտել մեզ շրջապատող բնությունը : Բայց գծապատկեր 6-ից և գծապատկեր 7-ից պարզ է դառնում որ, նրանք դեռ պատրաստ չեն պատասխանատվությունը վերցնել իրենց ուսերին և պայքարել առհասարակ բնության պահպանման և բարելավման համար:

Սա տեղիք է տալիս մեզ մտածել, որ մենք դեռ անելիքներ ունենք և չի կարելի սահմանափակվել միայն դպրոցի կողմից էկոլոգիական դաստիարակությամբ: Որպեսզի նոր ձևավորվող անհատը իր ուսերին վերցնի բնության պահպանման և բարելավման հարցերն ու խնդիրները, պետք է գիտակցել, որ Էկոլոգիական դաստիարակությունը չպետք է սկսվի և սահմանափակվի դպրոցով: Այն շարունակական պրոցես է և պետք է ուղեկցի մարդուն իր կյանքի տարբեր փուլերում:

Եզրակացություն

Դպրոցի առօրյայում էկոլոգիական դաստիարակությունը իրողություն դարձնելը դպրոցական կյանքի բոլոր կողմերի գործառույթն է:

Էկոլոգիական դաստիարակության հարցում իրենց գործուն մասնակցությունը պետք է ունենան կրթական համակարգի բոլոր օղակները՝ նախադպրոցական հիմնարկները, դպրոցը, բարձրագույն ուսումնական հաստատությունները և ողջ հասարակությունը:

Հետազոտության միջոցով եկա այն եզրահանգման որ.

- Բնապահպանական դաստիարակությունը պատասխանատվության դաստիարակում է: Այն պետք է անցնի բնաճանաչողությունից դեպի բնասիրություն, ապա՝ բնապահպանություն:

- Կենսաբանությունը ուսուցման կազմակերպման հենց առաջին քայլերից բնության գաղտնիքները բացահայտելու, կենդանի ցանկացած օրգանիզմի նշանակությունն ու դերը բնության մեջ և մարդու կյանքում ուսումնասիրելու միջոցով կարող է իրականացնել բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորում ու զարգացում, բնապահպանական դաստիարակության իրականացման գործընթաց:
- Բանապահպանական միջոցառումների միջոցով ձևավորվում է մարդու վերաբերմունքը բնության, և հենց իր նկատմամաբ, օգնում հասկանալու յուրաքանչյուրին բնության մեջ իր տեղն ու դերը:

Հետազոտության ընթացքում խոսեցինք էկոլոգիական դաստիարակության բարձրացման մասին և համոզվեցինք ինչպես է փոխվում մարդու վարքը էկոլոգիական դաստիարակության բարձրացման հետևանքով:

Օգտագործված գրականություն

1. Ասատրայն Լ.Թ. և Ավանեսյան Լ.Գ. < Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում>: Ուս. մեթ. ձեռնարկ, Երևան 2003թ.
2. Հովսեփյան Ա. < Անձի էկոլոգիական կուլտուրա>, <Արևիկ> 2005թ.
3. Մարուխյան Ո. Անձի էկոլոգիական կուլտուրա ,Արևիկ, 2005:
4. Մելքումյան Լ. Բնության պահպանության հիմունքներ, Երևան 2006թ
5. Միրիմանյան Խ. Բնության պահպանության հիմնական խնդիրները, 1979թ

6. Վալեսյան Լ. Ա. և ուրիշներ, Բնապահպանության և բնօգտագործման հիմունքներ, Երևան,1996:
7. Ветошкин А.Г. ,,Инженерная защита атмасферы от вредных выбросов,, 2016г.
8. Власова О. С. ,,Экология,, 2014г.
9. Демичев А.А.Экологическое право 2017г